ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

<<Վարդանանց ասպետներ>> հ. 106

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ Նանսեն 11 ՀԵՌ. 63-25-90, 63-25-60 էլ.փոստ՝ vaspetner@gmail.com, vaspetner@yahoo.com

N 306 <<20>> դեկտեմբերի 2023 թ.

ՀՀ ԿԳՄՍ գլխավոր քարտուղար
տիկին Հասմիկ Հակոբյանին

Հարգելի տիկին Հակոբյան

Հայտնում ենք Ձեզ, որ Երևանի <<Վարդանանց ասպետներ>> հ. 106 հիմնական դպրոցում առաջացել է <<Ինֆորմատիկա>> 7 / դասաժամ/, <<Տեխնոլոգիա>> /13 դասաժամ/, <<Արաբերեն>> /16 դասաժամ/, առարկաների ուսուցչի թափուր տեղեր:

Կից ուղարկում եմ հայտարարությունը:

Դպրոցի տնօրեն՝ Մ.Ռ. Վարդանյան

Մրցույթ՝ Երևանի ««Վարդանանց ասպետներ» թիվ 106 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Ինֆորմատիկա» (7 դասաժամ), «Արաբերեն» (16 դասաժամ), «Տեխնոլոգիա» (13 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ
- հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. դեկտեմբերի 20-ից մինչև 2024 թ. հունվարի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:
Մրցույթը տեղի կունենա 2024թ. հունվարի 9-ին՝ ժամը 14:30-ին, **«Երևանի <<Վարդանանց ասպետներ>> հ. 106 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում**: Հասցե՝ ք. Երևան, Նոր Նորքի I զանգված, Նանսենի փողոց, 11 շենք: Տեղեկությունների համար զանգահարել (010) 63-25-90, (010) 63-25-60 հեռախոսահամարներով: